# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՀՐԱՄԱՆ

№ 8251 «07» 05 2019թ.

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2016թ. մայիսի 26-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ ընթացակարգ) 8-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների պաշտոնները համալրելու նպատակով 2019 թ. հունիսի 17-ին՝ ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

| Հ/Հ | ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ | ԱՄԲԻՈՆԸ | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|---|
| 1. | Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման | 1 |
| 2. | Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության | 1 |
| 3. | Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Սոցիալ-տնտեսական աշխարհագրության | 1 |
| 4. | Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Սերվիսի | 1 |
| 5. | Պատմության ֆակուլտետ | Հայաստանի հարակից երկրների պատմության | 1 |
| 6. | Իրավագիտության ֆակուլտետ | Քրեական իրավունքի | 1 |
| 7. | Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ | Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի | 1 |
| 8. | Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ | Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի | 1 |
| 9. | Կենսաբանության ֆակուլտետ | Գենետիկայի և բջջաբանության | 1 |
| 10. | Կենսաբանության ֆակուլտետ | Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի | 1 |
| 11. | Կենսաբանության ֆակուլտետ | Էկոլոգիայի և բնության պահպանության | 1 |
| 12. | Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ | Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության | 1 |
| 13. | Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ | Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 14. | Քիմիայի ֆակուլտետ | Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի | 1 |
| 15. | Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Անգլիական բանասիրության | 1 |
| 16. | Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Անգլերեն լեզվի թիվ 1 | 1 |
| 17. | Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ | Նորարարության տնտեսագիտության | 1 |
| 18. | Ֆիզիկայի ֆակուլտետ | Միջուկային ֆիզիկայի | 1 |
| 19. | Ֆիզիկայի ֆակուլտետ | Պինդ մարմնի ֆիզիկայի | 1 |
| 20. | Ֆարմացիայի ինստիտուտ | Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի | 1 |

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչների ընտրության վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը, գիտական քարտուղարին և ֆակուլտետների դեկաններին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ